«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Սովորողների քննադատական մտածողության զարգացումը Հասարակագիտություն առարկայի դասավանդման ընթացքում

Առարկան՝ Հասարակագիտություն

Հետազոտող ուսուցիչ՝: Արման Սիմոնյան

Ուսումնական հաստատություն՝Հաղպատի միջնակարգ դպրոց

Երևան 2023

Սովորողների քննադատական մտածողության զարգացումը Հասարակագիտություն առարկայի դասավանդման ընթացքում

Ներածություն

Նպատակ

Ցույց տալ «հասարակագիտություն» առարկայի առաջատարի դերը սովորողի մոտ քննադատական մտածողություն ձևավորելու գործում և ընդգծել քննադատական մտածողության ներդրման ու օգտագործման արդյունավետությունը դասավանդման մեջ:

Խնդիրներ

- Ներկայացնել պատմական ակնարկ քննադատական մտածողության ծագման շուրջ
- Դիտարկել քննադատական մտածողության արժեքային կողմը:
- Ներկայացնել քննադատական մտածողության գործիքակազմը
- Ներկայացնել քննադատական մտածողության դրական կողմերը և «Հասարակագիտություն» առարկայի միջոցով զարգացման հնարավորությունները
- Դիտարկել քննադատական մտածողության բացասական կողմերը և առաջարկել հաղթահարման ուղիներ
- Վերցնել սովորողների շրջանակ և հետազոտել քննադատական մտածողության աստիճանը ֆորերի էֆֆեկտի միջոցով

Մեթոդաբանություն

- Միջազգային փորձի, համաշխարհային գրականության ուսումնասիրություն և համեմատություն
- Տվյալների համադրում և հակադրում
- Ստեղծագործական աշխատանք
- Հարցում աշակերտներին (Ֆորերի բնութագրական թերթիկի միջոցով)

Բանալի բառեր

Քննադատական մտածողություն, վերլուծություն, դատողություն, եզրահանգում, քվանտոր, հետազոտություն, կասկած, քննություն:

Արդիականություն

- Օ՜ մարդիկ, օ՜ ժամանակներ, ստացվեց այնպես, որ մի օր արթնացանք և զգացինք, որ տեղեկատվական տեխնոլոգիաները (և որ ահավորն է՝ հատկապես դրա բացասական դրսևորումները) հավակնում են գրավել աշակերտի ուշադրության և հետաքրքրության մեծ մասը: Ընդսմին, անհրաժեշտ է դառնում այդ ինֆորմացիան վերլուծելու, համադրելու, ուսումնասիրելու , ճշգրտելու, ազնիվ օգտագործելու կարողությունների
  և առհասարակ քննադատական մտածողության ողջ գործիքակազմի ձևավորումը և զարգացումը սովորողների մոտ: Ուստի անհրաժեշտ է հավուր պատշաճի ուսումնասիրել և ներդնել այն:

  ★ Համաշխարհային տնտեսագիտական ֆորումի հետազոտությունները ապագայի հմտությունների վերաբերյալ հանգեց այն եզրակացության, որ մի շարք գործիքներ մոտ ժամանակներում և հիմա արդեն ամենակարևորն են: Դրանցից երկրորդը՝ քննադատական մտածողությունն է:[1]

- Ի հավելում դրա, արդի աշխարհը անհատից այնքան ճկունություն, խորամանկություն, դիմադրողականություն է պահանջում, որ քննադատական մտածողությունը բացակայությունը՝ մերկ մարտադաշտ նետվելու պես մի բան է:

Բովանդակություն

ներածություն

[1] World economic forum

Գլուխներ

- 1.1 քննադատական մտածողության. պատմական ակունքները
- 1.2 քննադատական մտածողության արժեքային կողմը
- 1.3 քննադատական մտածողության գործիքակազմը
- 2.1. քննադատական մտածողությունը և «հասարակագիտություն» առարկան
- 2.2. Քննադատական մտածողության ստուգում սովորողների շրջանում (7րդից 12-րդ դասարաններ(մոտ 100սովորող)

Ամփոփում

Եզրակացություն

Օգտագործված գրականություն

Համառոտագիր

Այսօր այնքան հաճախ ենք լսում քննադատական մտածողության, դրա անընդհատ ներդրման անհրաժեշտության մասին, որ թվում է՝ դա նոր երևույթ է, մեր ժամանակների ձեռքբերում, իրականում պատմական արմատները թաղված են բավականին խորը: Ուստի, սահմանելով այն, նախ և առաջ կանդրադառնամ դրա պատմական զարգացմանը: Ըստ երևույթին քննադատական մտածողությունը չի առաջացել մարդկային պատմության ինչ-որ կետում, այլ միշտ ուղեկցել է: Քննադատական մտածողության կարևորությունը դասավանդման գործընթացում հետազոտության առարկա դարձնելով՝ նախ և առաջ ինքնավերլուծական ժեստ էր ինձ համար, ստուգում, թե արդյո՞ք դասավանդման ընթացքում օգտագործում եմ հնարավոր լավագույն միջոցները: Մյուս կողմից նաև փորձով կիսվելու հնարավորություն էր: Ինչու՞ հենց քննադատական մտածողությունը, որովհետև ժամանակակից իշխանության աղբյուրներից մեկը հենց ինֆորմացիան է, ուստի անհրաժեշտություն է առաջանում դրա զտման գործիքներին տիրապետելը՝ ինչում քննադատական մտածողության գործիքակազմը անփոխարինելի արսենալ է դառնում ճանաչեցի համար: Որպեսզի ամբողջական դիտարկել թեման նախ կանդրադառնամ պատմական ակունքներին. ով և ինչ ներդրում ունեցավ քննողական մտածողության

զարգացման գործում, ապա կբացահայտեն նաև քննադատական մտածողության արժեքային կողմը, քանի որ ինչպես նկատում է Նիցշեն՝ «միտքը կրթել՝ առանց սիրտը կրթելու վտանգավոր հիմարություն է»։[2] Այնուհետև կներկայացնեմ համաշխարհային փորձի կիրառումը դասի ընթացքում և Ֆորերի էֆեկտի միջոցով կուսումնասիրեմ արդյունավետությունը։

1.1.Քննադատական կամ քննողական մտածողության ակունքները

Ի՞նչ է քննադատական մտածողությունը.

ճանաչողական ռազմավարություն է՝ բաղկացած հնարավոր լուծումների մշտական փորձարկումից և ստուգումից։ Այն հանդիսանում է սկեպտիցիզմի և դոգմատիզմի ծայրահեղությունների այլընտրանք, հաճախ հակադրվում է ստեղծագործական մտածողությանը, որի հիմքում ընկած է, գիտակցության և ասոցիացիաների եղած բաղադրիչների օգտագործմամբ, խնդրի նոր լուծում գտնելը։ Ստեղծագործական(որը հաճախ նույնացվում է դիվերգենտ մտածողության հետ) և քննադատական մտածողության (կամ ռեֆլեկտիվ) տարբերությունը կայանում է նրանում, որ եթե առաջինը գիտակցության ասոցիացիաների միջոցով փնտրում է նոր լուծումներ, ապա երկրորդը զբաղվում է դրանց ստուգմամբ ու սխալների վերհանմամբ և գնահատմամբ։ Ենթադրվում է, որ «քննադատական մտածողություն» տերմինը առաջին անգամ օգտագործվել է Քլարկի և Ռիվի «մաթեմատիկայի ուսումնական

[2] Տե՛ս՝ Նիցշե Ֆ., Չարից և բարուց անդին, Չաստվածների մթնշաղ, Ապոլոն հրատ.,Երևան-1992,էջ 47

ծրագրի կարևորության և մտածողության ճշգրտության դերի» վերաբերյալ համապարփակ աշխատության մեջ (1928)։ Մինչ այդ գիտական շրջանակներում օգտագործվում էր «ռեֆլեկտիվ մտածողություն» տերմինը։ Լայն իմաստով քննադատական մտածողությունը դատողությունների համակարգ է, որն օգտագործվում է իրերը և տեղեկատվությունը վերլուծելու, երևույթները մեկնաբանելու, իրադարձությունները գնահատելու և այնուհետև օբյեկտիվ եզրակացություններ անելու համար։ Զարգացած քննադատական մտածողություն ունեցող անձը ունի հմտությունների մի ամբողջ շարք. սա դիտողականություն է և սեփական տեսակետն արդարացնելու ունակություն, կենտրոնանալ տեղեկատվություն ուսումնասիրելու վրա և վերլուծական հմտություններ կիրառելու կարողություն տարբեր իրավիճակներում։ 20-րդ դարի սկզբին ԱՄՆ-ում քննադատական մտածողության տեսության առաջացման հիմնական նախադրյալը պետք է համարել սոցիալական լարվածությունը, անկայունությունը՝ կապված հեղափոխության, Մեծ դեպրեսիայի և համաշխարհային տնտեսական ճգնաժամի հետ։ Այս կենսական ասպեկտները դրդել են փիլիսոփաներին և սոցիոլոգներին փնտրել գաղափարներ, որոնք փիլիսոփայությունը կվերածեն ակտիվ, պրագմատիկ գործընթացի, որն օգնում է մարդկանց գոյատևել արմատապես փոփոխվող աշխարհում։

Քննադատական մտածողության տեսության առաջացման հիմնական պատճառներից մեկը կրթության ճգնաժամն էր, դրա բարեփոխումները։ Այսպիսով, քննադատական մտածողության հարցերը դադարեցին լինել բացառապես փիլիսոփայության հետաքրքրության առարկա։

Քննադատական մտածողության տեսության ձևավորման և զարգացման գործում անհերքելի նշանակություն ունի անալիտիկ (վերլուծական) փիլիսոփայությունը։ Այսպիսով՝ 1960-ական թվականներին ԱՄՆ-ում և Անգլիայում ի հայտ եկած կրթության վերլուծական փիլիսոփայությունը ակունքները գտնվում են 19րդ դարի գերմանական իդեալիզմի գաղափարներում։ Հավելեմ՝ Սոկրատեսից խհետոԿանտը Փիլիսոփայության պատմության երկրորդ նշանակալից դեմքն է, ում պարտական են քննադատական ռացիոնալիզմի բոլոր ականավոր գործիչները։ Իսկ այդ երկար ժամանակահատվածի արանքում կարելի է նշել նաև Դեկարտի մասին։

17-րդ դարում ֆրանսիացի փիլիսոփա Ռենե Դեկարտը «Խորհրդածություններ մեթոդի մասին» աշխատության մեջ նկարագրեց արմատական կասկածի մեթոդը, որի հիմքում ընկած էր «թերահավատությունը», «կասկածն ամեն ինչի նկատմամբ»: Դեկարտին է պատկանում նաև հայտնի թեզը՝ «Ես մտածում եմ, հետևաբար գոյություն ունեմ»: Նրա կարծիքով, դա հենց այն վիճակն է, որն ապացույց չի պահանջում, և հենց առաջնային ճշմարտությունն է, որով կարելի է առաջնորդվել նոր ճշմարտությունների փնտրման ուղու վրա:[3]

Կանտ:

Կանտի հայտնագործությունները այսօր էլ զուրկ չեն իրենց արդիականությունից: Ուսումնասիրելով մտքի գաղտնիքները՝ նա եկել է այն եզրակացության, որ աշխարհի մասին մեր բոլոր պատկերացումները հնարավոր են դառնում միայն տարածության և ժամանակի կատեգորիաների միջոցով: Մնում էր միայն հասկանալ, թե կոնկրետ ինչ է տարածությունն ու ժամանակը: Արդյո՞ք դրանք զուտ օբյեկտիվ իրողություններ են, թե՞ մարդկային երևակայության արդյունք: Հենց այս հարցն էլ ստիպեց փիլիսոփային կասկածել թե՛ սուբյեկտիվ, թե՛ օբյեկտիվ գիտելիքի հավաստիության վրա: Սուբյեկտի և օբյեկտի տարբերությունն արդեն իսկ կասկածի հիմք է տալիս:[4] Իսկապես, թե՛ առաջին, թե՛ երկրորդ դեպքերում կա և՛ իրական փորձ, և՛ երևակայության խաղ: Այդ իսկ պատճառով Կանտին անհրաժեշտ էր երկու նոր հասկացություն՝ զուտ (մաքուր) բանականություն և պրակտիկ բանականություն: Պարզվեց, որ և՛ մտքի մաքուր խաղի, և՛ փորձով հաստատված խիստ գիտական գիտելիքների ոլորտը հավասարապես զերծ չեն իրենց իսկ եզրահանգումների հակասություններից: Այստեղ ուղիղ ճանապարհ է բացվում դեպի Հեգելի դիալեկտիկա և Կուրտ Գյոդելի ձևական լեզվի անավարտության, անհամապատասխանության վերաբերյալ տեսության համար. (Եթե դատողությունը ճշմարիտ է, ապա այն ամբողջական չէ. եթե ամբողջական է, ապա ճշմարիտ չէ): Ինչ է Հեգելի դիալեկտիկան. գաղափարները ինքնաշարժվում են, յուրաքանչյուր առանձին գաղափար փոխակերպվում է իր այլ, ուրիշ գաղափարի: Թեզիսի դրույթը վերափոխվում է անտիթեզիսի, հակադրույթի, ապա նրանք միաձուլվում են նոր միասնության մեջ: Հաջորդ կարևոր կետը, Հեգելը բացահայտումը

[3] Կանկե Վ. , Փիլիսոփայություն, Երևան-2001, էջ79

[4] Բուն Tv, Աքոտ Ոսկանյան, Թեմաց. Իմանուիլ Կանտ

գիտելիքի դիտարկումն էր սուբյեկտի և օբյեկտի միասնության մեջ: Մեջբերեմ. «Մեր սովորական գիտելիքը պատկերում է սոսկ այն առարկան, որը նա գիտի, բայց ոչ միաժամանակ ինքն իրեն, այսինքն բուն իսկ գիտելիքը: Սակայն ամբողջը ինչ գիտելիքի մեջ գոյություն ունի, ոչ միայն առարկան է, այլև ես, որը գիտի նաև իմ ու առարկայի միմյանց նկատմամբ ունեցած հարաբերությունը՝ գիտակցությունը»:[5]

Կանտի տեսության մյուս կարևոր առանցքը և հայտնագործությունը ինքնավերլուծող և ինքնաքննադատող բանականությունն էր: Սա ևս ճանապարհ էր, այս անգամ դեպի Վիտգեյնշտայնի լեզվական կամ վերլուծական փիլիսոփայություն. Ոչ միայն մենք ենք խոսում լեզվով, այլև լեզուն մեզնով: Վիտգեյնշտայնը առաջարկեց փիլիսոփայել ու նոր եղանակ. լեզվական պրակտիկայի մանրամասն «վերլուծություն, գիտական և առօրյա դատողությունների մոտիկություն, լեզվական խաղերի ստեղծագործական բնույթի բացահայտում, լեզվի և իրականության, օբյեկտի և սուբյեկտի համապատասխանության դոգմատիկական պատկերացումների քննադատություն»:[6]

Այսպիսով՝ Կանտը փիլիսոփայության մեջ կատարեց «Կոպերնիկոսյան հեղաշրջում», ինչի շնորհիվ զուտ տրամաբանական կողմնորոշումից հրաժարվում և անցում են կատարում դեպի գիտության պատմություն:

Գիտությունը և պատմությունը դառնում են անբաժանելի ամբողջություն, ինչի գործում իրենց ներդրումն ունեցան Պոպերը, Լակատոսը , Կունը և Ֆեյերաբենտը: Տեսությունը իր տեղը զիջում է փաստերին, երբ պարզվում է, որ փաստերի ըմբռնում առանց տեսության հնարավոր չէ և փաստերն իրենց հիմքում արդեն իսկ ենթադրում են տեսություն:

1.2.Քննադատական մտածողության արժեքային կողմը

Ամեն գործիդ մեջ ճշմարտասիրություն, ամեն ընթացքիդ մեջ արիություն և խոհեմություն, ամեն քայլափոխիդ հեռատես աչալրջություն: Ահա այն կանոնները,

[5] Հեգելի, Փիլիսոփայության ներածություն, փիլիսոփայական պրեպեդևտիկա, Հայաստանի պետական հրատարակչություն, Բ2 Ոգու Ֆենոմենոլոգիա կամ գիտություն գիտակցության մասին,Երևան 1964, էջ 131

[6] Կանկե Վ. , Փիլիսոփայություն, Երևան-2001, էջ81

որ պետք է առաջնորդեն մարդին: Ցավալի է, սակայն, որ այս սուրբ օրենքը չենք պահում, չենք պահում՝ մոռանալով մարդուս վիճակի փոփոխությունը.[7]

Նախ և առաջ քննադատական մտածողությունը սեր է առ ճշմարտություն, ուրեմն դրա արժեքային բաղադրատարրը ճշմարտասիրությունն է, արդարամտությունը:

Կողմ փաստարկ. Ճշմարտասիրությունը քրիստոնեական առաքինություններից գլխավորն է, դրա մասին է վկայում ամենապարզ օրինակը. «Մի ստիր» կատեգորիկ հրամայականը և որ այլևս ասածս հիմնավորելու խնդիր կառաջանա, մեջբերեմ Աստվածաշնչից. «Դուք ձեր սատանա հորիցն եք, և կամենում եք ձեր հոր ցանկություններն անել. Նա սկզբից մարդասպան էր և ճշմարտության մեջ չկեցավ, որովհետև ճշմարտություն չկա նրանում, երբ որ սուտ է խոսում իրաններիցն է խոսում, որովհետև ստախոս է և ստության հայրը»:[8]

Դեմ փաստարկ.«Եթե մենք որոշենք երբեք չխաբել, հարցն այն է, որ մեզ կսկսեն խաբել… պատկերացնելով, թե մենք թակարդում ենք՝ մենք իսկապես մի նուրբ խորամանկություն ենք դրսևորում դրանով, որովհետև մարդուն ավելի հեշտ է խաբել, երբ նա ինքն է ուզում քեզ խաբել»:[9]

Խոնարհություն

Անգամ լավագույն քննադատող մտածողները կարող են սխալ լինել իրենց դատողություններում: Երբ մարդը կարծում է, որ իրենք արդեն գիտեն ամեն ինչ թեմայի վերաբերյալ, նրանք այլևս բաց չեն նոր տեղեկատվության, քննադատության կամ գաղափարների համար:

Ուստի քննադատական դատողություններ կայացնելիս ընդունելու ամենակարևոր վերաբերմունքներից մեկը խոնարհությունն է: Այսպիսով, անձը կշարունակի դասեր քաղել իր հետ բախված բոլոր իրավիճակներից ՝ կա՛մ ամրապնդելու իր նախորդ գաղափարները, կա՛մ փոխելու դրանք ՝ հիմնվելով նոր գաղափարների վրա:

Քննադատության հանդեպ բացություն

---

[7] Պերճ Պռոշյան ,խ Երկեր, Հացի խնդիրը, Եր., Սովետական գրող հրատ.,1984:

[8] Աստվածաշունչ, Հովհաննես 8:44, Գեղեոն հրատ.:

[9] Ларошфуко Ф.,Мемуары. Максимы. Л., изд. Наука, 1971, стр. 159.

Նույն պատճառով քննադատող մտածողը պետք է կարողանա ունկնդրել սեփական կարծիքի հակառակ կարծիքները:

Այնուամենայնիվ, դա չի նշանակում, որ դուք պետք է ընդունեք այն ամենը, ինչ ձեզ ասում են ուրիշները. Դուք պարզապես պետք է ինքներդ ձեզ բացեք ուրիշների հետադարձ կապի համար, նախքան որոշեք, թե իմաստ ունի՞ այն, ինչ ասում են, կամ անհրաժեշտ է այն մերժել:

Հարգանք մյուսների նկատմամբ

Չնայած շատ դեպքերում նրանց գաղափարներն ավելի վավեր կլինեն, քան մարդկանց մեծամասնությունը (հիմնականում այն պատճառով, որ նրանք ավելի շատ ժամանակ են ծախսել դրանց վրա մտորելու վրա), քննադատող մտածողը պետք է հարգի ուրիշներին ՝ անկախ նրանից, թե ով է ճիշտ: Նույնիսկ եթե համաձայն չեք դիմացինի տեսակետների հետ, նրանց նկատմամբ թշնամական վերաբերմունք որդեգրելը կվնասի ձեր քննադատական մտածելակերպին, ինչպես նաև ուրիշների հետ ձեր հարաբերություններին:

Աշխատելու պատրաստակամություն

Հասկանալով աշխարհի իրական գործելակերպը շատ կարևոր քայլ է, բայց դա միայն առաջինն է: Հետևաբար, երբ նա հստակեցնի իր գաղափարները, քննադատող մտածողը պետք է պատրաստ լինի գործողության միջոցով փորձության ենթարկել դրանք:

Այս իմաստով, նպատակին հասնելու համար հնարավոր լավագույն գործողությունների ծրագիրը անդրադառնալը կօգնի դրան առավել արդյունավետորեն իրականացնել: ուստի քննադատական մտածողությունը և քրտնաջան աշխատանքը փոխադարձաբար ամրապնդող երկու հմտություններ են:

1.3.Քննադատական մտածողության ճանաչողական կողմը և գործիքակազմը

Քննադատական մտածողությունը նախ և առաջ բացառում է հույզերը, քանի որ դրանք կարող են խոչընդոտել ճանաչողության գործընթացին: Ապա սկսում հավաքել տվյալներ, որոնք անհրաժեշտ են իրավիճակն ամբողջությամբ հասկանալու համար, այնուհետև վերլուծել դրանք՝ առավել ճշմարիտ տրամաբանական եզրակացություն անելու համար: Քննադատական մտածողության տեսանկյունից ճշմարտությունը գործընթաց է, որին միանգամից տիրապետել հնարավոր չէ և այն հակասությունները, որոնք առկա են ճշմարտության մեջ, ոչ թե սխալ կամ անթույլատրելի են, այլ անհրաժեշտություն:[10] Ճշմարտությունը վերացականից կոնկրետը տանող ճանապարհ է: Շնորհիվ եղած հակասությունների քայլ առ քայլ բացասելով մոտենում է բացարձակ ճշմարտությանը: Այստեղ կարելի է տեսնել Հեգելի ներդրումը, ով փիլիսոփայության մեջ դրեց հարաբերական ճշմարտության գաղափարը:

Քննադատական կամ քննական մտածողությունը նույնականացնում են նաև ռեֆլեկտիվ մտածողության հետ, և եթե նայենք այս տեսանկյունից՝ քննական մտածողության հինգ փուլ կա:

Առաջին փուլն այն է, երբ մենք փորձում ենք ճանաչել մեր խնդիրը, փորձում ենք տարբեր կողմերից զարգացնել, առաջ գնալ, սցենարներ մշակել, որպեսզի հասկանանք, թե որն է մեր խնդիրը:

Երկրորդը փուլը խնդիրը սահմանելն է, ձևակերպելը:

Երրորդ փուլում, երբ արդեն ձևակերպել ենք խնդիրը, փորձում ենք ուսումնասիրել, դա զուգորդվում է փաստերի հավաքագրմամբ, այլ մեթոդների կիրառմամբ:

Չորրորդ և հինգերորդ փուլերը կիրառման և գնահատման փուլերն են: Գտած պատասխանները փորձում ենք կիրառել, մեր գտած լուծումները մեր խնդիրը լուծո՞ւմ են արդյոք, այնուհետև սահմանում ենք մեր հիպոթեզը՝ ասելով, որ ապացուցել ենք կամ չենք ապացուցել:[11]

Քննադատական մտածողության կրողը պետք է իր խոսքի կառուցման ընթացքում հաշվի առնի մի շարք քայլեր.

---

[10] Гегель Г. В. Ф., Энциклопедия философских наук, В 3т. Т.3 Философия духа, Москва, изд. Мысль, 1997, стр. 40

[11] Բուն tv. քննադատական մտածողություն

- Խուսափել լեզվական կարծրատիպերից

Դրանք որոշակի ազդեցություն ունեն ընկալման վրա. ա) դարձնում են ընկալումն ավելի դժվար, քանի որ ուղեղը՝ սովոր այդ բառակապակցությանը՝ «պլստում է» ասվածի իմաստի վրայով, բ) անհարկի օգտագործվում են որպես ապացույց, որ խոսողը պատկանում է «ընդունված մեծամասնությանը» («մեյնսթրիմին»), քանի որ օգագործում է տվյալ ասպարեզի «մեծամասնության» (իբր) կողմից ընդունված կարծրատիպ, և այդպիսով փորձում են ազդել հաղորդագրության հավաստիության վրա, այն ավելացնելով, գ) նույնը՝ որ ասելիքն «ընդունված բան է», քանի որ արտահայտված է «մեյնսթրիմ» միջոցներով, ուրեմն՝ հավանական է, որ ճիշտ է, դ) անհարկի արտահայտում են այն սպասումը, որ, քանի որ, խոսողի կարծիքով, կարծրատիպի իմաստը «նույնն է բոլորի համար», ուրեմն և՝ ընկալողի համար պիտի լինի նույնը՝ ուրեմն ընկալողը ստիպված է այն ընդունել նույն իմաստով, որով այն ասված է, և հասկանալ նույն իմաստով (և եթե վերջինս այդպես չի վարվում, կարող է հանդիպել անարդար վերաբերմունքի), ե) վերջապես՝ իրոք թաքցնում են անիմաստությունն՝ արտաքուստ իմաստավոր տեքստի տակ:[12]

- Խուսափել անտեղի «քվանտորային» և «բացարձակային» հասկացություններից. «միշտ», «երբեք», «բոլոր» և այլն:

Փոխարենը գործածել ավելի «ոչ բացարձակ» սահմանափակիչներ՝ «իմ կարծիքով՝ հաճախ», իսկ եթե չգիտենք՝ հաճախ, թե երբեմն, ապա կարելի է ասել. «կան դեպքեր» կամ «ինձ հանդիպած շատ դեպքերում», և այլն:

- Խուսափել անհարկի ընդհանրացումներից

ասենք՝ «բոլոր գերմանացիները ճշտապահ են» և այլն: Սա հատկապես կարևոր է ազգությունների, գենդերների, ռասաների, կրոնական ուղղությունների և նման՝ ինքնության առաջնային եզրերին վերաբերող հասկացությունների հետ գործողություններ կատարելիս, այն բոլոր դեպքերի, որոնք մտնում են «խտրականություն» հասկացության տիրույթը:

[12] ԵՀՀ, Տրամաբանական սխալներ և հռետորաբանական շեղող կիրառումներ, Քննադատական մտածողության և մեդիագրագիտության դասընթացներ, հավելյալ ուսումնական նյութեր, Երևան, 2019, էջ 13:

Շատ իմաստներով «քաղաքական կոռեկտության» ողջ էթիկան և ծեսը հիմնված է հենց այս հասկացությունները ճշգրիտ և տեղին
օգտագործելու պահանջի վրա:
Ասելիքը (գրելիքը) կառուցել այնպես, որ սկզբում (գերադասելի է) գա ընդհանրացված միտքը. «Ետխորհրդային հասարակություններում կոռուպցիոն դրսևորումների մշակութային որոշ առանձնահատկություններ կարելի է տեսնել ձևավորված դեռևս Խորհրդային Միության ժամանակներում», որից հետո անպայման գա օրինակ՝ մեկ կամ մի քանի. «Օրինակ՝ հակումը դեպ անորակ աշխատանք կարելի է սերել դեռևս գուլագային մշակույթից եկող «տուֆտա» հասկացությունից»…

- Շատ կարևոր է նաև լռելը:

Խոսել չշտապելը շատ կարևոր է՝ մտածված խոսք ձևակերպելու համար, որպեսզի ձեր խոսքը կամ տեքստը չլինի պատահական: Այդ մոտեցումը անվանվում է «երկրորդ մտածողություն», այն կարելի է անվանել նաև «խմբագրում» և այլն. բանավոր խոսքը չես հասցնում խմբագրել, գրավորը կարելի է, դրա համար այն հրապարակելուց կամ ուղարկելուց առաջ արժի ստուգել, գուցեև մի քանի անգամ, իսկ բանավորը կարելի է սովորել այնպե՛ս արտահայտել, որ չափսոսես հետո ասածիդ համար,
եթե նախապես պատրաստվել ես խոսելուն և վարժվել հաճախ բանավոր հրապարակային խոսելուն:

- Սակայն կա նաև այս մոտեցման գրեթե հակառակ նկատառումը.

քանի որ ամեն վայրկյան մեզ տրված է միայն մեկ անգամ՝ արժի ամեն առիթով, երբ պետք է կոմունիկացվել, ասել այդ պահի համար ամենակարևորը. այն, ինչը մարդ համարում է, որ ամենակարևորն է: Պատահական կամ դատարկ խոսքն արժեք չունի, և այն նաև ազդում է իր շրջապատի վրա, ու դատարկ խոսքերով շրջապատված կարևոր խոսքը՝ «գայլը» գոռացող մարդու մասին առակին ճիշտ համաձայն, կորցնում է իր ազդեցությունը նույնպես: Ուրեմն՝ ծանրակշիռ խոսք ասա, կամ պարզապես՝ ամեն հնարավոր առիթից օգտվիր ասելու համար տվյալ պահի համար ամենակարևորը:

2.1Հասարակագիտություն և քննադատական մտածողության

Այն հարցին, թե ինչքանով է հասարակագիտություն առարկան նպաստում քննադատական մտածողության զարգացումը, պատասխանելու համար բավական է ներկայացնեմ օրվա դասի մի քանի հակիրճ պլան.

9-րդ դասարան Թեմա Հանրային քաղաքականություն

Դաս 8-11 «Ակտիվ քաղաքացի» գործնական հետազոտական աշխատանք.

Նպատակ	Հասարակական կյանքին պատասխանատու մասնակցության համար գիտելիքների խորացումն ու հմտությունների զարգացումը: Հնարավորություն ընձեռել աշակերտներին ընկալելու քաղաքականության ու կառավարման գաղափարը
Խնդիր	Ընկալի հանրային քաղաքականության իմաստը Ուսումնասիրի հանրային խնդիրը Հետազոտի ու առաջարկի լուծման ուղիներ
Վերջնարդյունք	Դաս 8. Վեր հանի իրեն հետաքրքրող հանրային խնդիրը. Տնային աշխատանք՝ Հավաքի և վերլուծի այդ խնդիրների վերաբերյալ տեղեկույթը Դաս 9. Վեր հանված խնդիրներից ընտրի մեկը, հավաքի լրացուցիչ տեղեկություններ Դաս 10. Համադրի տեղեկությունները , համակարգի, նախապատրաստի ներկայացնել Դաս 11. Ներկայացնի հետազոտական արդյունքները

	Հետազոտման խնդրի որոշում Տեղեկույթի հավաքում Խնդրի լուծման ճանապարհների հետազոտում Խնդրի լուծման սեփական հանրային քաղաքականության մշակում Գործողությունների պլանի մշակում[13]
Ռեսուրսներ	Խնդրի բացահայտման և վերլուծության ձև Հարցազրույցի ձև Տպագիր աղբյուրների տեղեկույթի վերլուծության ձև Ռադիո և հեռուստատեսային աղբյուրների վերլուծության ձև [14]

12-րդ դասարան Թեմա-մտածողություն Ենթաթեմա-Քննադատական մտածողություն

Նպատակ	Զարգացնել սովորողների քննադատական մտածողությունը
Խնդիր	• Գիտելիք- Տրամաբանության օրենքների ուսուցում

[13] Գագիկ Ղազինյան, Արթուր Վաղարշյան, Հասարակագիտություն,9-րդ դասարանի դասագիրք, ,Երևան 2018 ,էջ 50

[14] Սիվիտաս, Աշակերտի ձեռնարկ, Քաղաքացի նախագիծ, համայնքային հիմնախնդիրների հետազոտման նախագիծ, Երևան-2019, էջ4-7

	• Հմտություն-Տրամաբանական սխալներ փնտրելու և գտնելու և հակափաստարկելու հմտության ձևավորում • Դիրքորոշում -Խոսքի՝ որպես տրամաբանական կառույցի պատկերացման զարգացում • Արժեք -Ճշմարտության արժեքի կարևորության ընդգծում
Վերջնարդյունք	Կիմանան տրամաբանության օրենքները, դրանցից կբխեցնեն տրամաբանական սխալները
Դասի Ընթացք	Քայլ 1. Դասը սկսել խնդրահարույց քայլով. Հանձնարարված դասը հարցնել այն աշակերտին, որը ամենայն հավանականությամբ պատրաստ չի լինի, իսկ երբ չպատասխանի, բոլոր աշակերտներին մեկ նշանակել՝ հիմնավորումով՝ «Որպեսզի համոզվեք ծովը աղի է, թե ոչ, պարտադիր չէ ողջ ծովի ջուրը խմել, մի բուռն էլ բավարար է»: Խրախուսել արտահայտել վրդովմունքը՝ պահանջելով հակափաստարկ իմ գործողությանը: 4րոպե Քայլ 2. Քառաբաժան մեթոդով անդրադարձ կատարել տրամաբանության չորս օրենքներին՝ նույնության, բացասական, երրորդի բացառման օրենքը, բավարար հիմունքի օրենք: Քննարկման միջոցով բացահայտել, թե որ օրենքի խախտումն էր քայլ 1-ը: 5ր Քայլ 3. Հաջորդաբար դասագրքում բերված տրամաբանական սխալները տեղավորել քառաբաժանի մեջ՝ երկիմաստության սխալ, հապճեպ ընդհանրացում, մտքի նենգափոխում, ընդդեմ մարդու, ծագման սխալ, անիրազեկության փաստարկ: 10ր Քայլ 3. Անհատական աշխատանք՝ բերել յուրաքանչյուր տրամաբանական սխալի համար մեկ օրինակ մեր անձնական փորձառությունից: 6ր Քայլ 4. Փոխադարձ գնահատում ՝ փոխանակվել տետրերով և ընկերոջ գրածի և բացատրածի միջև համապատասխանությունը

	գնահատելու համար նկարել ժպտացող էմոջի, սխալը՝ տխուր էմոջի։ 5ր Քայլ 5. Փնտրել և գտնել տրամաբանական սխալներ մամուլում։ 15ր Քայլ 6. քայլ հինգի նմանությամբ կատարել հետազոտական աշխատանք։
Գործունեության ձև	Պռոբլեմային ուսուցում, Հետազոտական աշխատանք, իրավիճակային քննարկումներ

2.2. Քննադատական մտածողության ստուգում սովորողների շրջանում

Նշված դասի պլաններից պարզ երևում է որ քննադատական մտածողությունը մի կողմից հասարակագիտություն առարկայի համար նպատակ է, մյուս կողմից ուսուցման միջոց, գործիք։ Ընդսմին, իրար հաճախ հակադրվող ստեղծագործական մտածողությունը և քննադատական մտածողությունը առարկայի շրջանակներում համադրվում ու ստեղծում են հասարակագիտության ողջ շքեղությունն ու գրավչությունը։

Իհարկե՛, անհրաժեշտ է դառնում նաև ստուգել այդ քննադատական մտածողության զարգացման աստիճանը, ուստի կատերեցի հետազոտություն' ստուգելու Բարնումի կամ Ֆորերրի էֆֆեկտի[15] ազդեցությունը։

Էֆեկտի բացատրություն՝ SCAN ME:

[15] Forer, B.R. (1949). The fallacy of personal validation: A classroom demonstration of gullibility. Journal of Abnormal and Social Psychology, 1949, p. 118-123

Այսպիսով իմ 103 աշակերտի առանձին-առանձին տվեցի բնութագրական նույն տեքստը՝ խնդրելով գնահատել 1-10 միավորային սանդղակով(որտեղ 1-ը վատ, 10-ը գերազանց)։

Բնութագիրը, որը տրվել է գնահատման՝ :

Արդյունքները՝

Թեստի արդյունքը %-ով /թվով



Որտեղ՝

Ամփոփում

Ելնելով վերը բերված վկայություններից, կարելի է ասել, որ հասարակագիտության դասերի ընթացքում կիրառված ակտիվ մեթոդները (պրոբլեմային ուսուցում, նախագծային ուսուցում, հետազոտական աշխատանքներ, վերլուծական գործնականների, չորս անկյան, չորս գլխարկների մեթոդներ, բանավեճեր և այլն) բերել է ուսումնառության աճի, քանի որ բարձրացել է աշակերտների բովանդակային մասնակցությունը, մոտիվացիան, բարձրացել է նրանց ինքնավստահությունը և ինքնակառավարումը, որոնք էլ բերել են ընկալումների և ցանկալի նպատակների տարբերությունների նվազեցման. սրա մասին են վկայում նաև աշակերտների

ինքնաանդրադարձը և հետազոտությունների, գործնականների և նախագծերի բովանդակությունները:

Կարելի է փաստել, որ արդյունքում զարգացել է նաև սովորողների քննադատական մտածողությունը, ինչի մասին է վկայում հետազոտության արդյունքները

Իհարկե, չպետք է կարծել, որ գրանցված առաջընթացը պայմանավորված է բացառապես այս մի երկու դասի ազդեցությամբ: Դասին ուղեկցող բոլոր բաղադրիչները

անպայման իրենց ազդեցությունը ունենում են այդ արդյունքների վրա: Որակյալ ուսուցումը բազմատարր է՝ բաղկացած անհատական ուժեղ և թույլ կողմերից, որոնց համադրությունն ավելի արդյունավետ է և իրագործելի, քան մեկ միասնական և միատարր համակարգը:

Եզրակացություն

հասարակագիտություն առարկայի շրջանակներում քննադատական մտածողությունը մի կողմից նպատակ մյուս կողմից միջոց դարձնելը տալիս է իր արդյունքները.

- Դիմադրություն ժամանակի մարտահրավերներին՝ տեղեկատվական տեխնոլոգիաների վնասակար ազդեցության նվազմանը:
- Ռեֆլեկտիվ մտածողության զարգացում և այն ստեղծագործականի հետ համադրելու հմտություն:
- Հետաքրքրության և մոտիվացիայի բարձրացում
- զարգացնում է հիմնախնդիրը տարբեր տեսանկյուններից դիտարկելու,լուծումներ գտնելու և որոշումներ կայացնելու կարողություն
- Սովորողների մոտ զարգացնում է տեղեկատվություն մշակելու և հաղորդելու պատասխանատվությունը
- արդյունավետ է դարձնում խմբակային քննարկումը
- օգնում է հետևողականորեն պլանավորել մտածելու ընթացքը
- բերում է աշակերտների մոտիվացիայի բարձրացմանը

Ինչը նշանակում է, որ քննադատական մտածողության և դասի բովանդակության փոխազդեցությունը կապակցումը բերում է մեծ արդյունավետության և տալիս նաեւ լրացուցիչ հմտություններ կյանքում կիրառելու համար: Ուստի նպատակահարմար և արդյունավետ է քննադատական մտածողություն զարգացնող մեթոդների բազմազան կիրառումը:

Օգտագործված գրականություն

1. Աստվածաշունչ, Գեղեոն հրատ.
2. Գագիկ Ղազինյան, Արթուր Վաղարշյան, Հասարակագիտություն,9-րդ դասարանի դասագիրք,Երևան 2018
3. ԵՀՀ, Տրամաբանական սխալներ և հռետորաբանական շեղող կիրառումներ, Քննադատական մտածողության և մեդիագրագիտության դասընթացներ, հավելյալ ուսումնական նյութեր
4. Հեգել, Փիլիսոփայության ներածություն, փիլիսոփայական պրեպեդևտիկա, Հայաստանի պետական հրատարակչություն, Բ2 Ոգու Ֆենոմենոլոգիա կամ գիտություն գիտակցության մասին,Երևան 1964
5. Պերճ Պռոշյան ,խ Երկեր, Հացի խնդիրը, Եր., Սովետական գրող հրատ.,1984:
6. Սիվիտաս, Աշակերտի ձեռնարկ, Քաղաքացի նախագիծ, համայնքային հիմնախնդիրների հետազոտման նախագիծ, Երևան-2019
7. Սերոբ Խաչատրյան, Սիլվա Պետրոսյան, Հասարակագիտություն 12-րդ դասարանի դասագիրք, Երևան-2018
8. Վ. Կանկե , Փիլիսոփայություն, Երևան-2001
9. Гегель Г. В. Ф., Энциклопедия философских наук, В 3т. Т.3 Философия духа, Москва, изд. Мысль, 1997
10. Ларошфуко Ф.,Мемуары. Максимы. Л., изд. Наука, 1971,
11. Forer, B.R. (1949). The fallacy of personal validation: A classroom demonstration of gullibility. Journal of Abnormal and Social Psychology, 1949

12. Բուն Tv, Աշոտ Ոսկանյան, Թեմա 9. Իմանուիլ Կանտ

13. Բուն tv. Սերոբ Խաչատրյան, բնաղատական մտածողություն

14. World economic forum